Բելգիայի
Նախագահություն
Կրթություն և ուսուցում
7 Դեկտեմբեր, 2010

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրությունը հիմնված Եվրոպական համագործակցության Մասնագիտական կրթության և ուսուցման վրա 2011-2020 ժամանակահատվածի համար

Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական նախարության պաշտոնյաների, Եվրոպական սոցիալական գործընկերների և Եվրոպական հանձնաժողովի հանդիպումը Բրյուգեում, 2010 թվականի դեկտեմբերի 7-ին: Հանդիպումը նպատակ ուներ վերանայել 2011-2020 թթ. Կոպենհագենյան գործընթացի ռազմավարական մոտեցումները և առաջնահերթությունները:

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

Ներածություն

Նոյեմբեր 29-30-ին, 2002 թվականին Կոպենհագենյան հռչակագիրը մեկնարկել է Մասնագիտական և կրթական ուսուցման (ՄԿՈՒ) ընդլայնված համագործակցության եվրոպական ռազմավարություն, որը սովորաբար անվանվում է «Կոպենհագենյան գործընթաց»: Այսօր 2010 թվականին, 8-ամյա եվրոպական համագործակցության հիման վրա, մենք սահմանել ենք երկարաժամկետ ռազմավարական նպատակներ հաջորդ տասնամյակի համար (2011-2020): Մենք հաշվի ենք առել մեր անցյալ ձեռքբերումները, ներկա և ապագա մարտահրավերները, և Եվրոպական գործընթացի ընդգծված սկզբունքներն ու գաղափարները: Գործընթացի ամբողջական վերանայումը, որը կատարվել է Մասնագիտական ուսուցման զարգացման եվրոպական կենտրոնի կողմից, հիմնված է 27 անդամ պետությունների, Իսլանդիայի և Լիխտենշտեյնի հետազոտությունների վրա, ինչպես նաև Խորվաթիայի, Թուրքիայի և Նախկին Հարավսլավական Մակեդոնիայի մասին հաշվետվությունների վրա՝ արված Եվրոպական վերապատրաստման հիմնադրամի կողմից, նպաստել են մեր աշխատանքին:

1. **Նոր խթաններ Մասնագիտական կրթության և ուսուցման համար Եվրոպայում**

Ներկա և ապագա մարտահրավերներ

Կրթություն և ուսուցում վաղվա Եվրոպայի համար

Եվրոպան փորձում է ոտքի կանգնել ծանր տնտեսական և ֆինանսական ճգնաժամից: Գործազրկության աստիճանը բարձր է հիմնականում երիտասարդների շրջանում:[1] Ճգնաժամը ընդգծել է մեր տնտեսությունները և հասարակությունները բարեփոխելու անհրաժեշտությունը: Եվրոպան ցանկանում է դառնալ ավելի խելացի, ավելի կայուն և ընդգրկուն: Այս ամենին հասնելու համար մենք կարիք ունենք ճկուն, բարձրորակ կրթական և ուսուցման համակարգի, որը կարձագանքի այսօրվա և վաղվա անհրաժեշտություններին:[2]

Աշխատաշուկայի զարգացում

[1] 2010 թվականի սեպտեմբերին Եվրոմիության 27 անդամ պետությունների համար սահմանվել է 9.6 % ընդհանուր գործազրկության մակարդակ և 20.3 % երիտասարդների գործազրկության մակարդակ (աղբյուրը՝ Եվրոստատ):

[2] 2010 թվականի հունիսի 9-ին Եվրոպական հանձնաժողովը ընդունել է կապ-հաղորդակցություն «Եվրոպա 2020 ռազմավարությանը աջակցելու համար նոր խթաններ Եվրոպական համագործակցության Մասնագիտական կրթության և ուսուցման մեջ», որն լայն առումով առաջարկել է հետագա օրակարգ Եվրոպական ՄԿՈՒ քաղաքականության համար:

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

Այսօր Եվրոպայում 25-64 տարեկանների սահմանում կոպիտ հաշվարկով 76 միլիոն մարդ, որոնց թիվը հավասարազոր է Իտալիայի, Հունգարիայի և Ավստրիայի ընդհանուր բնակչության թվին միասին վերցված, ունեն կամ ցածր որակավորում կամ ընդհանրապես զուրկ են որակավուրումից: Չափից շատ 18-24 տարեկան երիտասարդներ շարունակում են թողնել իրենց կրթությունն ու ուսուցումը չորակավորված: Դպրոցը վաղ թողնելու դեմ միջոցների ձեռնարկումը կամ կանխումը մեծ անհարժեշտությունը է: Եվրոպայի մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման կենտրոնի (Cedefop) կանխատեսումներն այն մասին, թե հաջորդ տասնամյակում ինչ հմտությունների կարիք է ունենալու հասարակությունը, ցույց են տալիս, որ տեխնոլոգիական փոփոխությունը կավելացնի միջին և բարձր որակավորում ունեցողների պահանջարկը ցածր որակավորվածների հաշվին: Նույնիսկ այն մասնագիտությունները, որոնք հիմնականում պահանջել են ցածր մակարդակի գիտելիքներ, անպայման պահանջելու են միջին կամ անգամ բարձր մակարդակի որակավորում: Սա նշանակում է, որ ցածր որակավորվում ունեցող մարդիկ (կամ ընդհանրապես չունեցողները) հետագայում ավելի մեծ դժվարությամբ աշխատանք կկարողանան գտնել: Կա նաև զարգացող ճշմարտություն, որն առաջարկում է հմուտ աշխատողներին աշխատանքի բևեռացում աճող աշխատավարձով, իսկ ոչ հմուտներին՝ նվազող աշխատավարձով:

Ճիշտ հմտություններ

Այսօրվա աշակերտներն ու ուսանողները 2020 թվականին դեռ կլինեն իրենց կարiերայի սկզբում և ամենաքիչը 30 տարվա ճանապարհ պետք է անցնեն իրենց մասնագիտական կյանքում, և նրանցից ոմանք կունենան այնպիսի զբաղմունք, որ դեռևս գոյություն չունի, և ոմանք էլ կընտրեն այպիսի զբաղմունք, որն անհետանում է:

Մենք կարիք ունենք բարելավելու ՄԿՈՒ կարողությունները, որպեսզի պատասխանենք աշխատաշուկայում փոփոխվող պահանջներին: Աշխատաշուկայի փոփոխվող կարիքների երկարաժամկետ ներգրավումը ՄԿՈՒ-ի դրույթների մեջ պահանջում է ձևավորվող հատվածների և հմտությունների, առկա զբաղմունքների փոփոխությունների ավելի լավ ըմբռնում: Շահագրգիռ կողմերի հետ համագործակցելով՝ մենք պետք է պարբերաբար վերանայենք աշխատանքային և կրթական/ուսուցողական չափորոշիչները, որոնք էլ իրենց հերթին կսհամանեն, թե ինչ կարող ենք ակնկալել վկայականի կամ դիպլոմի սեփականատիրոջից: Սա նշանակում է ավելի մոտ համագործակցություն շահագրգիռ կողմերի միջև և ակտիվ հմտությունների ակնկալում՝ ներառելով ներկայացուցիչներ մասնագիտական օղակից, սոցիալական գործընկերներ, համապատասխան հասարակական կազմակերպություններ և կրթություն և ուսուցում տրամադրողներ:

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

Մենք կարիք ունենք պարբերաբար վերամշակելու ՄԿՈՒ բովանդակությունը, ենթակառուցվածքները և մեթոդները, որպեսզի կարողանանք պահել արտադրական տեխնոլոգիաների ու աշխատանքային գործակալությունների տեղաշարժերի տեմպը:

Անցումը դեպի կանաչ տնտեսություն մեգա միտում է, որն ազդում է հմտությունների անհրաժեշտության վրա տարբեր աշխատանքներում և սեկտորներում: Անհրաժեշտ հմտությունները կարելի է գտնել գոյություն ունեցող մասնագիտություններում:

Իրականում, աշխատաշուկան պահանջում է հավասարակշռություն ընդհանուր զարգացող կանաչ հմտությունների (օրինակ՝ թափոնների նվազեցում, էներգետիկ արդյունավետության բարելավում) և հատուկ հմտությունների միջև: Ինչպես տեղեկատվությունը և հաղորդակցումը, տեխնոլոգիական հմտությունները այսօր էական են բոլորի համար, կանաչ հմտությունները ապագայում կլինեն կարևոր գրեթե յուրաքանչյուր աշխատանքներում:

Հասարակության ծերացումը

Ապագա եվրոպական աշխատաշուկան միաժամանակ կբախվի ծերացող բնակչության և երիտասարդների կրճատվող խմբերի հետ: Արդյունքում, մեծահասակները և հատկապես ավելի մեծահասակ աշխատողները պետք է արդիականացնեն և ընդլայնեն իրենց հմտությունները և կարողությունները շարունակական ՄԿՈՒ-ի միջոցով:
Ցկյանս ուսումնառության աճող անհրաժեշտությունը նշանակում է, որ մենք պետք է ունենանք առաքման ավելի ճկուն եղանակներ, ուսուցմանը հարմարեցված առաջարկներ և ֆորմալ ու ոչ ֆորմալ կրթության վավերացման համար ճիշտ հաստատված համակարգեր:

ՄԿՈՒ երկակի նպատակը

Սկզբնական և շարունակական ՄԿՈՒ կիսում է երկակի նպատակ, այն է՝ նպաստել աշխատունակությանը և տնտեսական աճին և արձագանքել լայն հասարակության մարտահարվերներին, մասնավորապես՝ նպաստելով սոցիալական համախմբվածությանը: Այս նպատակները պետք է առաջարկեն երիտասարդներին, ինչպես նաև մեծահասակներին գրավիչ և դժվարին կարերայի հնարավորություններ, պետք է վերաբերվեն հավասարապես ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց, ինչպես մեծ ներուժ ունեցողին, այնպես էլ աշխատաշուկայում վտարման ենթարկվածին:

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

Որակ և գերազանցություն

Եվրոպական հասարակություններում և տնտեսություններում ՄԿՈՒ-ին տրված դերը այն է, որ ապահովի կայունություն և գերազանց մասնագիտական կրթություն և ուսուցում: Եթե Եվրոպան ցանկություն ունի ամբողջ աշխարհում պահպանել իր դիրքը որպես արդյունաբերական ոլորտում ամենաուժեղ արտադրող, ապա այն պետք է ունենա համաշխարհային մակարդակի ՄԿՈՒ:
Խելացի հասարակություններում մասնագիտական հմտություններն ու կարողությունները կարևոր են այնքան, որքան ակադեմիական հմտություններն ու կարողությունները:
Եվրոպական ՄԿՈՒ համակարգերի բազմազանությունը փոխադարձ ուսուցման արժանիք է: Թափանցելիությունը և որակի ապահովման ընդհանուր մոտեցումը կարևոր են փոխադարձ վստահություն կառուցելու համար, որը կնպաստի շարժունակությանը և այդ համակարգերի միջև հմտությունների և կարողությունների ճանաչմանը: Մեկ տասնամյակ առաջ եվրոպական համագործակցությունում պետք է առաջնահերթությունը տանք ՄԿՈՒ որակի ապահովմանը:

Մարդկային ուժի հզորացում

Ոչ միայն աշխատաշուկաները, այլ նաև հասարակություններն են արագորեն փոփոխվում: Մենք պետք է հզորացնենք մարդկանց, որպեսզի նրանք կարողանան հարմարվել նոր զարգացումներին և կառավարեն փոփոխությունները: Սա նշանակում է հնարավորություն տալ մարդկանց ձեռք բերել ոչ ամբողջովին մասնագիտական գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ: Այսպիսի լայն կարողությունները՝ առանցքային կարողությունները, կարևոր են կյանքում հաջողության հասնելու համար, և դրանց ձեռքբերումը պետք է հնարավոր լինի ինչպես ՄԿՈՒ-ում, այնպես էլ ցանկացած ձևի կրթության մեջ: ՄԿՈՒ-ն նաև պետք է հնարավորություն տա սովորողներին հասնելու, իրագործելու և կիրառելու առանցքային կարողություններն առանց անտեսելու մասնագիտական հմտությունները: ՏՀՏ հմտություններն ու կարողություններն և օտար լեզվի իմացությունը իրապես կդառնա ավելի ու ավելի քննադատական ինչպես աշխատանք ստանալու և այդ աշխատանքը պահպանելու հարցում, այնպես էլ առօրյա կյանքում:
Աշխատանքի վրա հիմնված ուսուցումը մարդկանց ներուժը զարգացնելու միջոց է: Աշխատանքի վրա հիմնված բաղադրիչը նպաստում է պրոֆեսիոնալ ինքնության զարգացմանը և կարող է բարձրացնել այն մարդկանց ինքնագնահատականը, ովքեր իրենց համարում են անհաջողակներ: Աշխատանքի վրա սովորելը թույլ է տալիս աշխատողներին գումար վաստակելու հետ միաժամանակ զարգացնել իրենց ներուժը: Լավ իրականացված ՄԿՈՒ-ն, որը թույլ է տալիս ուսուցումը կեսդրույք կամ ամբողջդրույք աշխատանքի ժամանակ և անգամ աշխատանքից դուրս, կարող է նաև խիստ նպաստել սոցիալական համախմբվածության մեր հասարակություններում:

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

ՄԿՈՒ միջազգայնացում

Որպես համաշխարհային կրթական շուկայում խաղացողներ, ազգային ՄԿՈՒ համակարգերը պետք է կապված լինեն աշխարհի հետ, որպեսզի մնան արդիական ու մրցունակ: Նրանք պետ է ունակ լինեն ներգրավել ուսանողներ եվրոպական և երրորդ երկրներից՝ ապահովելով նրանց կրթություն ու վերապատրաստում, ինչպես նաև ավելի հեշտացնեն այն ճանապարհը, որի միջոցով նրանք կարող են տեղեկանալ իրենց հմտությունների մասին: Ժողովրդագրական փոփոխությունները և միջազգային միգրացիան այս խնդիրները դարձնում են ավելի տեղին: Չնայած կրթության և ուսուցման եվրոպական ոլորտը ձևավորվում է, բայց մենք դեռ չենք հասել մեր իրական նպատակին, որպեսզի վերափոխենք խոչընդոտները շարժունակության: ՄԿՈՒ-ում սովորողների շարժունությունը մնում է ցածր: Օտարերկրյա սովորողներ ՄԿՈՒ համարկարգում ներգարվելու համար ավելի լավ և նպատակային տեղեկատվության տրամադրում և ուղղորդում է հարկավոր: ՄԿՈՒ սովորողների և ուսուցիչների անդրազգային շարժունակության աճը, արտերկրում ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և կարողությունների ընդունումը ապագայում կլինի կարևոր մարտահրավեր:

Ներդրումներ ՄԿՈՒ մեջ – ընդհանուր պատասխանատվություն

ՄԿՈՒ ձևավորումը ազգային կառավարության, սոցիալական բաժնետերերի, ՄԿՈՒ ապահովողների, ուսուցիչների, դասընթացավարների և ուսանողների ընդհանուր պատասխանատվությունն է, նրանք բոլորը ունեն փոխադարձ հետաքրքրություն սերտ համագործակցության մեջ:
Մեծահասակների կրթության վրա շեշտադրում դնելը վերջին տարիներին պահանջում է լրացուցիչ ռեսուրսներ:
Տնտեսական անկումը չպետք է հանգեցնի ՄԿՈՒ-ում ներդրումների կրճատման: Պետական բյուջեի սղությունը կստիպի մեզ գտնել նորարական լուծումներ ՄԿՈՒ կայուն ֆինանսավորման ապահովման համար, և մենք պեռք է վստահ լինենք, որ այդ ռեսուրսների ապահովումը տրամադրված է արդյունավետ և բաշխված է հավասարապես:

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

Կոպենհագենյան գործընթացի կարևոր ձեռքբերումները

Կոպենհագենյան գործընթացը կարևոր դեր է խաղացել եվրոպական և ազգային մակարդակներում ՄԿՈՒ իրազեկության բարձրացման մեջ: Առաջընթացը առավել ակնհայտ է եվրոպական գործիքներում[3], սկզբունքներում և ուղեցույցներում, որոնք զարգացել են որակավորումը՝ դարձնելով այն ավելի թափանցիկ, համեմատելի և փոխադրելի, ինչպես նաև բարելավել են ուսումնառության ճկունությունը և որակը: Նրանք ստեղծել են մի հիմք, որի միջոցով հնարավոր կլինի շարժվել դեպի եվրոպական կրթության և ուսուցման ոլորտ:

Կոպենհագենյան գործընթացի ազդեցությունը տարբեր երկրների ՄԿՈՒ քաղաքակրթությունների վրա թե՛ արագ էր, թե՛ ուժեղ. Այն պատճառ դարձավ խոր բարեփոխումների, որոնց թվում էր ազգային որակավորման շրջանակների զարգացումը, որը նպատակ ուներ իրականացնել Որակավորումների Եվրոպական շրջանակը (ՈԵՇ/EQF) և ուսումնառության արդյունքների մոտեցման հերթափոխը:
Փոխելով ներմուծման վրա հիմնված ուսուցման գործընթացը դեպի ուսումնառության արդյունքների՝ համապարփակ շրջանակները, որոնք ներառում են ընդհանուր կրթություն, ՄԿՈՒ և բարձրագույն կրթություն, կարող են օգնել ստեղծել թափանցիկ և ճկուն ազգային որակավորման համակարգեր:

Ուսուցման գործունեությունը և փորձի փոխանակումը միևնույն ժամանակ օգնել են ստեղծել գործընթացի սեփականության զգացում և խթանել են հետագա գործունեությանը: Սակայն անհրաժեշտ է ավելի լավ կապ շահագրգիռ կողմեր՝ սոցիալական մասնակիցներ, ՄԿՈՒ մատակարարներ, քաղաքացիական հասարակություն և ուսանողներ ներգարվելու համար:
ՄԿՈՒ քաղաքականությունը միայնակ չի դիմակայում սոցիալ-տնտեսական մարտահրավերներին և չի կարող միայնակ իրականություն դարձնել շարժունակ և ցկյանս ուսումնառությունը: Բազմակողմանի մոտեցումների պահանջ կա, որն էլ կկապի ՄԿՈՒ-ն մասնավորապես սոցիալական և աշխատանքային քաղաքականությունների հետ:

[3] Այդ գործիքները մշակվել են 2002 թվականից՝ Եվրոպասս, Որակավորումների եվրոպական շրջանակ (ՈԵՇ/EQF), Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական կրեդիտային համակարգ (ՄԿՈՒԵԿՀ/ECVET) և Որակի Ապահովման Եվրոպական Հենքային Շրջանակ (ՈԱԵՀՇ/EQAVET):

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

Կոպենհագենյան գործընթացը ԵՄ քաղաքականության համատեքստում

Զարգացող քաղաքական ենթատեքստ տալով առաջիկա 2011-2020 տասնամյակին, մասնավորապես Եվրոպա2020 Ռազմավարության լույսի ներքո, 2002 թվականի Կոպենհագենյան Հռչակագրին պետք է տրվի նոր ազդակ: Քանի որ Կոպենհագենյան գործընթացը «Կրթություն և ուսուցում 2020» ռազմավարական ծրագրի անբաժան մասն է, ՄԿՈՒ ոլորտի նպատակները պետք է համապատասխան լինեն այդ ծրագրի շրջանակներում ամրագրված ընդհանուր նպատակներին:

ՄԿՈՒ-ն պետք է իր դերն ունենա Եվրոպա2020-ի կրթության ոլորտում դրված թիրախային խորագրերի հարցում, այն է՝ մինչ 2020 թվականը դպրոցը վաղ լքողների տոկոսային թվի կրճատում մինչև ավելի քիչ քան 10% և 30-34 տարեկանների հատվածում ավարտուն եռաստիճան կամ համարժեք կրթություն ունեցողների թիվը բարձրացում առնվազն 40%-ի:
Կարճաժամկետ ծրագրված արդյունքների ցանկը արդեն կազմվել է՝ նշելով կոնկրետ գործողությունները, որոնք անհրաժեշտ են ռազմավարական նպատակներին հասնելու համար: Այդ ցանկը նաև կհեշտացնի ապագայում կատարվելիք պարբերաբար վերանայումները:

Հաշվի առնելով վերը նշված Եվրոպական ռազմավարության և շրջանակների առաջնահերթությունները և ընդհանուր նպատակները և հարգելով սկզբունքների սուբսիդացիան՝ ընդունվել է հետևյալը՝

1. ՄԿՈՒ գլոբալ տեսլական 2020 թվականի համար
2. Տեսլականի վրա հիմնված 11 ռազմավարական նպատակներ 2011-2020 ժամանակահատվածի համար
3. 22 կարճաժամկետ ծրագրված արդյունքներ առաջիկա 4 տարիների ընթացքում ազգային մակարդակով՝ նշելով ԵՄ մակարդակի աջակցությունը
4. ընդհանուր սկզբունքներ՝ ընդգծելով Կոպենհագենյան գործընթացի կառավարումն ու սեփականությունը:

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

II. Մասնագիտական կրթության և ուսուցման կանխատեսություն 2020-ին

Մինչև 2020 թվականը Եվրոպական ՄԿՈՒ համակարգերը պետք է լինեն ավելի գրավիչ, պատշաճ, կարերայի ուղղվածությամբ, նորարական, մատչելի և ճկուն քան 2010 թվականին, և պետք է նպաստեն գերազանցություն և հավասարություն ցկյանս ուսումնառության՝ ապահովելով

- Գրավիչ և ընդգրկուն ՄԿՈՒ բարձր որակավորում ունեցող ուսուցիչներով և դասընթացավարներով, նորարարական կրթական մեթոդներով, բարձրորակ ենթակառուցվածքներով և սարքավորումներով, աշխատաշուկայի բարձր արդիակաությանբ և հետագա կրթության և ուսուցման համար նախատեսված ուղիներով;
- Բարձր որակի նախնական ՄԿՈՒ (Ն-ՄԿՈՒ), որը գրավիչ տարբերակ կարող է լինել ուսանողների, ծնողների ու հասարակության համար, քանի որ այն ունի նույն արժեքը, ինչ ընդհանուր կրթությունը: Ն-ՄԿՈՒ պետք է վերազինի ուսանողներին թե՛ առանցքային, թե՛ հատուկ մասնագիտական հմտություններով:
- Դյուրամատչելի և կարերայի վրա հիմնված շարունակական ՄԿՈՒ (Շ-ՄԿՈՒ) աշխատակիցների, գործատուների, անկախ ձեռնարկատերերի և գործազուրկ մարդկանց համար, որը կհեշտացնի թե՛ ունակությունների զարգացումը, թե՛ կարերայի փոփոխությունները:
- Ուսումնասռության արդյունքների վրա հիմնված ՄԿՈՒ ճկուն համակարգեր, որոնք կաջակցեն ճկուն ուսումնառության ուղիներին և թույլ կտան թափանցելիություն տարբեր կրթական և ուսումնական ենթահամակարգերի միջև (դպրոցական ուսուցում, ՄԿՈՒ, բարձրագույն կրթություն, մեծահասակների կրթություն), և որոնք կսպասարկեն ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության վավերացումը՝ ներառելով իր մեջ այն կարողությունները, որոնք ձեռք են բերվել աշխատավայրում:
- Եվրոպական կրթական և ուսումնական ոլորտ թափանցիկ որակավորման համակարգով, որը հնարավորություն է տալիս ուսումնառության արդյունքների փոխանցման և կուտակման, ինչպես նաև որակավորումների և կարողությունների ճանաչման, որոնք նպաստում են անդրազգային շարժունությանը:
- Զգալիորեն աճող հնարավորություններ ՄԿՈՒ ուսանողների և մասնագետների անդրազգային շարժունակության համար
- Հեշտ ընդունելի և ցկյանս բարձրորակ տեղեկատվություն, ղեկավարման և խորհրդատվական ծառայություններ, որոնք կձևավորեն միասնական ցանց, որն էլ իր հերթին թույլ կտա Եվրոպայի քաղաքացիներին ընդունել հիմնավոր որոշումներ և կառավարել իրենց ուսումնական և մասնագիտական կարիերան ավանդական գենդերային եզրագծից դուրս:

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

III. Ռազմավարական նպատակներ 2010-2020 ժամանակահատվածի համար, որին հաջորդում է 2011-2014 կարճաժամկետ ծրագրված արդյունքները

ՄԿՈՒ որակի ու արդյունավետության բարելավում և ՄԿՈՒ գրավչության և համապատասխանելիության ընդլայնում

ՄԿՈՒ-ն պետք է ունենա բարձր համապատասխանելիություն աշխատաշուկայի և մարդկանց կարիերաների համար: ՄԿՈՒ գրավչությունը բարձրացնելու համար մասնակից երկրները պետք է գործեն հետևյալ նպատակներով ու գործողություններով՝

1. Դարձնել Ն-ՄԿՈՒ-ն ուսուցման գրավիչ տարբերակ

Ա. Բարձրացնել Ն-ՄԿՈՒ-ի որակը (նայել կետ 2)՝ բարելավելով ուսուցիչների, ուսանողների, դասընթացավարների և դպրոցի ղեկավարների կարողությունների որակը, ներկայացնելով ճկուն ուղիներ կրթական բոլոր մակարդակների միջև և բարձրացնելով ՄԿՈՒ-ի կողմից առաջարկվող հնարավորությունների հանրային իրազեկությունը: Սա հատկապես կարևոր նշանակություն ունի մասնակից երկրներում, որտեղ ՄԿՈՒ-ն ձգտում է լինել անթերագնահատելի;

Բ. Խրախուսել պրակտիկ գործունեությունը և բարձրորակ տեղեկատվության և առաջնորդության ապահովումը, որոնք թույլ կտան պարտադիր կրթություն ստացող երիտասարդ աշակերտներին և նրանց ծնողներին ծանոթանալ տարբեր մասնագիտական զբաղմունքների և կարիերաների հնարավորությունների հետ;

Գ. Ապահովել առանցքային հմտությունների ինտեգրումը Ն-ՄԿՈՒ-ի ուսումնական ծրագրերի մեջ և մշակել համապատասխան գնահատման միջոցներ;

Դ. Կազմակերպել ուսուցմանն ու ուսումնառությանը նպաստող միջոցառումներ, որոնք արագացնում են կարրերայի կառավարման հմտությունների զարգացումը Ն-ՄԿՈՒ-ում;

Ե. Ն-ՄԿՈՒ սովորողներին հնարավորություն տալ օգտվել համապատասխան ժամանակակից տեխնիկական սարքավորումներից, նյութերից և ենթակառուցվածքներից: ՄԿՈՒ մատակարարները պետք է հաշվի առնեն համատեղ ծախսերը և սարքավորումները բիզնես մակարդակի վրա: Պետք է նաև աջակցել ձեռնարկություններում աշխատանքի վրա հիմնված ուսուցմանը, որն ունի համապատասխան ենթակառուցվածքներ;

Զ. Վերահսկել ՄԿՈՒ շրջանավարտների անցումը աշխատաշուկա կամ հետագա կրթության և ուսուցման համակարգ՝ օգտագործելով վերահսկման ազգային համակարգերը:

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

2. Ն-ՄԿՈՒ-ի և Շ-ՄԿՈՒ-ի գերազանցության, որակի և համապատասխանելիության խթանում

Որակի ապահովում

Ա. ՄԿՈՒ դրույթի բարձրորակ լիները նախապայման է իր իսկ գրավչության համար: Բարելավված որակ, բարձրացված թափանցիկություն, փոխադարձ վստահություն, ուսանողների և աշխատողների շարժունություն, և ցկյանս ուսումնառություն երաշխավերլու համար, մասնակից երկրները պետք է ստեղծեն որակի ապահովում համաձայն Որակի Ապահովման Եվրոպական Հենքային Շրջանակ (ՈԱԵՀՇ /EQAVET):

Բ. Մինչ 2015 թվականի ավարտը մասնակից երկրները ազգային մակարդակով ՄԿՈՒ մատակարարների համար պետք է ստեղծեն միասնական որակի ապահովման դաշտ, որը նույնպես տարածվում է աշխատավայրում ուսումնառության վրա և համատեղելի է Որակի Ապահովման Եվրոպական Հենքային Շրջանակ (ՈԱԵՀՇ /EQAVET) շրջանակներում:

Ուսուցիչների, դասընթացավարների և այլ ՄԿՈՒ մասնագետների որակը

Ա. Մասնակից երկրները պետք է բարելավեն նախնական և շարունակական վերապատրաստումները ուսուցիչների, վերապատրաստողների, դաստիարակների և խորհրդատուների համար՝ առաջարկելով ճկուն ուսուցման ապահովում և ներդրում: Եվրոպական ուսուցիչների և դասընթացավարների ծերացող բնակչությունը, աշխատաշուկայի և աշխատանքային շրջակա միջավայրի փոփոխումը և լավագույններին ուսուցման մեջ ներգարվելու անհրաժեշտությունը դարձնում են այս նպատակը ավելի քննադատական: Պետք է խրախուսվի ուսուցիչների և դասընթացավարների թրեյնինգները ձեռնարկություններում:
Բ. Մասնակից երկրները պետք է աշխատեն միասին և բացահայտեն փորձային և ուղեցուցային լավագույն սկզբունքները՝ հաշվի առնելով կարողությունների փոփոխությունները և ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների պրոֆիլը: Այս ամենը կարող է ի կատար ածվել Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպայի մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման կենտրոնի (Cedefop) աջակցությամբ՝ համագործակցելով ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների ցանցի հետ:

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

Աշխատաշուկայի պատշաճությունը

ՄԿՈՒ աշխատաշուկայի պատշաճությունը (և՛ Ն-ՄԿՈՒ, և՛ Շ-ՄԿՈՒ) և ՄԿՈՒ շրջանավարտների աշխատունակությունը պետք է ամրապնդել տարբեր միջոցառումների միջոցով՝

Ա. Մասնակից երկրների իշխանությունները ազգային, տարածքային կամ տեղական մակարդակում պետք է ստեղծեն դպրոցների և ձեռնարկությունների միջև ընդլայնված համագործակցության հնարավորություններ, որպեսզի բարելավվի մի կողմից ուսուցիչների գիտելիքները աշխատափորձի վերաբերյալ, մյուս կողմից՝ դասընթացավարների մանկավարժական հմտություններն ու կարողությունները;
Բ. Մասնակից երկրները պետք է նպաստեն սոցիալական գործընկերների, ձեռնարակատերերի, կրթության և ուսուցման մատակարարների, աշխատանքային ծառայությունների, պետական մարմինների, հետազոտական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի միջև աջակցությանը, որպեսզի աշխատաշուկայի կարիքների համար կարողանան ապահովել տեղեկատվության ավելի լավ հաղորդակցում և այդ կարիքների, գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացման ավելի լավ համընկնում: Գործատուները և սոցիալական աշխատողները պետք է ձգտեն հստակ սահմանել, թե ինչ կարողությունների ու որակավորուների կարիք ունեն նրանք կարճաժամկետ և երկարաժամկետ աշխատանքներում, ինչպես նաև տարբեր աշխատանքային սեկտորներում: Ընդհանուր լեզվի[4] մշակումը, որը մի կողմից նպատակ ունի միավորել կրթության ու ուսուցման աշխարհը, իսկ մյուս կողմից՝ աշխատանքի աշխարհը, պետք է շարունակվի ու պետք է համահունչ լինի ԵՄ մյուս գործիքների հետ, ինչպիսին է Որակավորումների եվրոպական Շրջանակը (ՈԵՇ);
Գ. ՄԿՈՒ ուսումնական ծրագիրը պետք է ուղված լինի դեպի արդյունավետությունը և արձագանքի աշխատաշուկայի պահանջներին: Ընկերությունների և մասնագիտական կազմակերպությունների մասնաճյուղերի հետ համագործակցության մոդելները պետք է բարձրացնեն այս հարցը ու ապահովեն ՄԿՈՒ հաստատություններին աշխատունակության և ՄԿՈՒ շրջանավարտների աշխատանքային զբաղվածության մասին տեղեկատվությամբ;
Դ. ՄԿՈՒ որակ և պատշաճություն ապահովելու համար մասնակից երկրները և հատկապես ՄԿՈՒ մատակարարները պետք է օգտվեն տեղեկատվական ծառայություններից, որոնք տեղեկատվություն կտան ՄԿՈՒ շրջանավարտների աշխատանքի և հետագա ուսուցման վերաբերյալ;

[4] 2010 թվականին Կրթական, գիտական, մշակութային կազմակերպության դասակարգում (ԿԳՄԿ/ESCO) ծրագրի նպատակն էր այս ընդհանուր լեզուն:

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

Ե. Աշխատանքի վրա հիմնված ուսուցումը, որը իրականացվում է բիզնես և շահույթ չհետապնդող կազմակերպությունների հետ համատեղ, պետք է դառնա ՄԿՈՒ դասընթացների կարևոր առանձնահատկությունը:
Զ. Մասնակից երկրները պետք է աջակցեն աշկերտության դասընթացների զարգացմանը և դրանց իրազեկության բարձրացմանը:

Կարճաժամկետ ծրագրված արդյունքներ 2011-2014 թթ. համար Ռազմավարական Նպատակներ 1-2
Ազգային մակարդակով գործողություններ՝ 1. Կազմակերպել միջոցառումներ ուղղված ՄԿՈՒ գրավչությանը և գերազանցությանը, որոնք կարող են ներառել քարոզարշավներ և կարողությունները բացահայտող մրցույթներ; 2. Աջակցություն ցուցաբերող գործողություններ, որոնք թույլ են տալիս պարտադիր կրթություն անցնող երիտասարդ աշակերտներին ծանոթանալ մասնագիտական և աշխատանքային հնարավորություններին; 3. Ձեռնարկել համապատասխան միջոցառումներ Որակի Ապահովման Եվրոպական Հենքային Շրջանակի Հանձնարարական (ՈԱԵՀՇ /EQAVET) իրականացնելու համար և ՄԿՈՒ համար ազգային որակի ապահովման շրջանակներում գրանցել առաջընթաց; 4. Ինչպես հարմար է ապահովել առանցքային հմտությունների և կարերայի կառավարման հմտությունների համարժեքորեն ինտեգրումը Ն-ՄԿՈՒ ուսումնական ծրագիր; դրանք կարող են ձեռք բերվել Շ-ՄԿՈՒ վերապատրաստման դասընթացների միջոցով; 5. Կառավարությունները, սոցիալական աշխատողները, ՄԿՈՒ մատակարարները պետք է կատարեն անհրաժեշտ կարգավորումները, որպեսզի - մեծացնեն աշխատանքի վրա հիմնված ուսուցումը, որը ներառում է աշկերտություն, որն էլ իր հերթին կնպաստի սկսնակների աճին Եվրոպայում մինչև 2012 թվականը; - ստեղծեն համագործակցության հնարավորություններ ՄԿՈՒ հաստատությունների և ձեռնարկությունների միջև (առևտրային և ոչ առևտրային), օրինակ՝ ձեռնարկություններում ուսուցիչների համար դասընթացների կազմակերպում; - տրամադրեն տեղեկատվություն ՄԿՈՒ հաստատություններին ՄԿՈՒ շրջանավարտների աշխատունակության վերաբերյալ 6. Հետամուտ լինել ուսուցումից դեպի աշխատանք փոփոխությանը վերաբերող խորհրդատվական համակարգերի ստեղծմանը:

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

Աջակցություն ԵՄ մակարդակով՝

- Քաղաքականության փաստաթուղթ, որը դեր ունի մասնագիտական գերազանցության խելացիության և կայունության աճի մեջ;
- Հաշվի առնել Եվրոպական աջակցությունը ՄԿՈՒ խթանման ակցիաների համար՝ ներառելով Եվրոբարոմետր ՄԿՈՒ գրավչության համար;
- Խրախուսել հմտությունները բացահայտող մրցույթները, որոնք կիրականացվեն եվրոպական և գլոբալ մակարդակով;
- Ուղղորդում և տեխնիկական աջակցություն Որակի Ապահովման Եվրոպական Հենքային Շրջանակի (ՈԱԵՀՇ /EQAVET) իրականացման համար;
- Վերանայել Որակի Ապահովման Եվրոպական Հենքային Շրջանակի (ՈԱԵՀՇ /EQAVET) իրականացումը ազգային մակարդակով 2013 թվականին;
- Որակի ապահովման ծրագրերի թեմատիկ ցանցավորում Լեոնարդո դա Վինչի ծրագրի շրջանակներում;
- Ուղեցույց/ աշխատանքի վրա հիմնված ուսուցման մոդելների ուսումնասիրություն (Cedefop-ից ներմուծում);
- Հզորացնել հմտությունների և կարողությունների զարգացման ակնկալումը, հատկապես հմտությունների կանխատեսումների միջոցով (Cedefop) և Եվրոպական հմտության խորհուրդների ստեղծումով:
- Մշակել ընդհանուր լեզու, որը նպատակ ունի միավորել կրթության ու ուսուցման աշխարհը (ԿԳՄԿ/ESCO) համահունչ ԵՄ մյուս գործիքների հետ, ինչպիսին է Որակավորումների եվրոպական Շրջանակը (ՈԵՇ):
- Հաշվի առնել աշխատունակության համար ԵՄ մեքենայական ծրագրի ընդունումը հիմնված Հանձնաժողովի առաջարկների վրա;
- Աշխատել լավագույն փորձի և ուղենշային սկզբունքների վրա՝ հաշվի առնելով ՄԿՈՒ ուսուցիչների և դասընթացավարների փոփոխվող պրոֆիլները (աշխատել Cedefop հետ):

Ցկյանս ուսումնառությունը և շարժունությունը որպես իրականություն

3. Ազատ մուտքի հնարավորություն տալ դեպի վերապատրաստումներ և որակավորումներ՝ հաշվի առնելով Շարունակական ՄԿՈՒ (Շ-ՄԿՈՒ)

Զարգացնելով ՄԿՈՒ ներդրումը և մինչ 2020 թվականը հասցնելով մեծահասակների, ովքեր մասնակցություն ունեն կրթության և ուսուցման մեջ, թիվը 15 %-ի, մասնակից երկրները պետք է

Ա. Ակտիվորեն խրախուսեն անհատներին և ՄԿՈՒ մատակարարներին ունենալ սեփական ներդրումը և մասնակցել Շ-ՄԿՈՒ-ում՝ հաշվի առնելով անապահով խմբերի

և աշխատաշուկայում փոփոխությունների բախված մարդկանց (ինչպես օրինակ, ռիսկային աշխատողները և գործազուրկները);

Բ. Ստեղծել համապատասխան շրջանակ, որը նպատակ ունի խրախուսել ընկերություններին, որպեսզի նրանք շարունակեն իրենց ներդրումները մարդկային ռեսուրսների զարգացման և Շ-ՄԿՈՒ համար: Դրդապատճառների, իրավունքների և պարտականությունների ճիշտ զուգակցման որոշումը պատկանում է մասնակից երկրներին;

Գ. Խրախուսել ճկուն ուսուցման կազմակերպումը (ինտերնետային-ուսուցում, երեկոյան դասընթացներ, թրեյնինգներ աշխատանքային ժամերի ընթացքում և այլն) և ուսուցման մատչելիությունը տարբեր իրավիճակներում: Շարունական դասընթացները պետք է ներառեն բոլոր տեսակի ուսուցումները, ինչպես նաև ընդգրկեն դասընթացներ ընկերության ներսում, այսինքն՝ աշխատանքի վրա հիմնված ուսուցում և պետք է հավասարապես մուտք ապահովեն կանանց և տղամարդկանց համար:

Դ. Խրախուսել ուսումնական հաստատությունների և գործատուների համագործակցությունը, հատկապես վերապատրաստելով մեծ թվաքանակով ցածրահմուտ աշխատողների, ովքեր ունեն ավելի ցածր միջնակարգ կրթություն և ովքեր կշահեն այն մոտեցումներից, որտեղ հիմնական հմտությունները ներդրված են ՄԿՈՒ-ում;

Ե. Ոչ ուշ քան 2015 թվականը սկսել զարգացնել ազգային ընթացակարգերը ոչ-ֆորմալ և ֆորմալ ուսուցման ճանաչման և վավերցման համար՝ ինչպես հարկն է աջակցություն ստանալով ազգային որակավորումների շրջանակներից: Այս ընթացակարգերը պետք է կենտրոնանան գիտելիքների, հմտությունների և կարողությունների վրա, անկախ այն կոնտեքստից, թե ինչպես են դրանք ձեռք բերվել, օրինակ՝ չափահասների ուսուցանում, ՄԿՈՒ, աշխատանքային փորձ և կամավորական աշխատանքներ: Մեծ ուշադրություն պետք է դարձնել գիտելիքներին, հմտություններին և կարողություններին, որոնք պարտադիր կերպով չեն հանգեցնում ամբողջական ֆորմալ որակավորման: Սերտ համագործակցությունը այլ քաղաքական ոլորտների հետ, ինչպիսիք են՝ երիտասարդության, սպորտի, մշակույթի սոցիալական հարցերը, կարևոր է այս աշխատանքում:

Զ. Ձեռնարկել հատուկ միջոցառումներ Շ-ՄԿՈՒ-ում մարդկանց մասնակցության ցուցանիշի բարձրացման համար, այն մարդկանց, ովքեր բախվել են աշխատաշուկայի փոփոխությունների հետ և այն խմբերի, ովքեր թրեյնինգներում ունեցել են ցածր մասնակցություն, ինչպիսիք են՝ կանայք, ծեր և ցածր որակավորում ունեցող աշխատողները: Ընդհանուր առմամբ, մասնակից երկրները պետք է աշխատեն 25-64 տարեկան ցածր որակավորում ունեցողների թիվը, ովքեր մասնակցում են ցկյանս ուսումնառությանը, հասցնել ավելիի ներդրումների միջոցով և այդ տարիքային խմբում նրանց մասնակցության թիվը հասցնել միջինի:

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

Հաշվի առնելով և՛ ՆՄԿՈՒ-ն, և՛ ՇՄԿՈՒ-ն

Ա. Նպաստել անցումը կրթությունից և ուսուցումից դեպի աշխատանք, և մի աշխատանքից դեպի մյուս աշխատանքը՝ ապահովելով ինտեգրված, ուղորդված ծառայություններ (աշխատանքային և խորհրդատվական ծառայություններ), ինչպես նաև կարերայի կառավարման հմտություններ ինչպես երիտասարդների, այնպես էլ մեծահասակների համար: Կարևոր է, որ ծառայություն մատուցողները ներգրավվեն աշխատանքում հեշտությամբ և օբյեկտիվորեն՝ փոխանակելով տեղեկատվությունը և զարգացնելով ուղորդված ծառայությունների որակը:
Բ. Մշակել կամ օժանդակել միջնակարգ կամ բարձրակարգ ՄԿՈՒ-ը Որակավորումների եվրոպական շրջանակի 5 կամ ավելի բարձր մակարդակի վրա, ինչպես հարկն է, և նպաստել ԵՄ խորագրային թիրախի 40%-ի երրորդային կամ համարժեք կրթությանը հասնելուն:
Գ. Առաջ քաշել ՄԿՈՒ ընդհանուր կրթության և բարձրագույն կրթության միջև ճկուն ուղիներ և բարձրացնել թափանցելիությունը՝ ամրապնդելով կապերը նրանց միջև: Այս նպատակին, ինչպես նաև ցկյանս ուսումնառության մեջ ավելի մեծ մասնակցության հասնելու համար, մասնակից երկրները պետք է արագացնեն համապարփակ ազգային որակավորումների շրջանակի ստեղծումը և իրականացումը՝ հիմնված ուսումնառության արդյունքների վրա:
Դ. Հանձնաժողովը և մասնակից երկրները պետք է աշխատեն՝ բարձրացնելով Եվրոպական երկու կրեդիտային համակարգերի միջև կապը՝ Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական կրեդիտային համակարգ (ՄԿՈՒԵԿՀ/ECVET) և Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգ (ԿԿՓԵՀ/ECTS):

4. Ս-ՄԿՈՒ և Շ-ՄԿՈՒ-ի միջազգայանացման համար ռազմավարական մոտեցումների զարգացում և միջազգային շարժունության նպաստում

Ա. Տնտեսական գլոբալիզացիան խրախուսում է գործատուներին, աշխատողներին և անկախ ձեռնարկատերերին ընդլայնել իրենց գործունեության շրջանակը իրենց իսկ երկրներում: ՄԿՈՒ մատակարարները պետք է նրանց աջակցեն այս գործընթացում՝ տալով ուսուցման բովանդակությանը միջազգային ծավալներ և ստեղծելով միջազգային ցանցեր գործընկեր հաստատությունների հետ;
Բ. Մասնակից երկրները պետք է խրախուսեն տեղական և տարածքային իշխանություններին և ՄԿՈՒ մատակարարներին (ներդրումների, ֆինանսավորման նախագծերի (այդ թվում՝ օգտվելով Եվրոպական կառուցվածքային միջոցներից) և լավագույն փորձի տարածումների միջոցով), որպեսզի նրանք զարգացնեն ռազմավարություններ ՄԿՈՒ-ում միջսահմանային համագործակցության համար, որի նպատակն է խթանել սովորողների, ուսուցիչների, դասընթացավարների և այլ ՄԿՈՒ մասնագետների ավելի մեծ շարժունությանը: Մասնակից երկրները պետք է աջակցեն

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

ՄԿՈՒ-ին, որը թույլ է տալիս, քաջալերում է և նախընտրելիորեն ինտեգրում է շարժունության ժամանակաշրջաններ՝ ներառելով աշխատանքային տեղաբաշխումները արտասահմանում;

Գ. Մասնակից երկրները սիստեմատիկ կերպով պետք է օգտվել և առաջ քաշեն Եվրոպական թափանցիկ գործիքները, ինչպիսիք են՝ Որակավորումների եվրոպական շրջանակը (ՈԵՇ/EQF), Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական կրեդիտային համակարգը (ՄԿՈՒԵԿՀ/ECVET) և Europass-ը, անդրազգային շարժունությունը խթանելու համար;

Դ. Մասնակից երկրները պետք է նպաստեն լեզվի ուսուցմանը ՄԿՈՒ-ում սովորողների և ուսուցիչների համար, և ՄԿՈՒ համագործակցության և միջազգային շարժունության համար ուշադրություն դարձնեն օտար լեզուների կարևորությանը՝ ապահովելով լեզվի ուսուցման թրեյնինգներ, որոնք հարմարեցված կլինեն ՄԿՈՒ հատուկ կարիքներին:

Կարճաժամկետ ծրագրված արդյունքներ 2011-2014 թթ. համար Ռազմավարական Նպատակներ 3 և 4
Գործողություններ ազգային մակարդակով՝ 7. «ԿՈՒ2020»-ում ցկյանս ուսումնառության մեջ ՄԿՈՒ ներդրումը առավելագույնի հասցնել համար վերանայել ներդրումների, իրավունքների և պարտականությունների օգտագործումը բոլոր ներգրավված կողմերի համար և ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի խրախուսել մասնակցությունը Շ-ՄԿՈՒ-ում; 8. Իրականացնել Որակավորումների եվրոպական շրջանակի հանձնարարական՝ - Համապարփակ Որակավորումների ազգային շրջանակի զարգացում՝ հիմնված ուսումնառության արդյունքների վրա: Օգտագործել Որակավորումների ազգային շրջանակը որպես կատալիզատոր ՄԿՈՒ և բարձրագույն կրթության միջև ավելի թափանցելիություն ստեղծելու, հետմիջնակարգ կամ բարձրագույն Որակավորումների եվրոպական շրջանակի մակարդակներում ՄԿՈՒ-ն զարգացնելու և պահպանելու և ճկուն ուսումնառական ուղիներ մշակելու համար: - Որակավորումների ազգային շրջանակի մակարդակների հիշատակում Որակավորումների եվրոպական շրջանակի մակարդակներում մինչ 2012 թվականը: 9. Մշակել և խթանել կարգերի կիրառում ոչ ֆորմալ և ֆորմալ կրթության վավերացման համար Որակավորումների եվրոպական շրջանակի/ Որակավորումների ազգային շրջանակի և առաջնորդության աջակցությամբ; 10. Ապահովել ինտեգրված (կրթություն, թրեյնինգներ, աշխատանք) ուղղորդման ծառայություններ սերտորեն կապված աշխատաշուկայի կարիքների հետ;

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

11. Առաջ գնալ Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական կրեդիտային համակարգի իրականացման գծում Հանձնարարականին համապատասխան և մասնակցել Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական կրեդիտային համակարգի շարժունության փորձարկումներին:
12. Ձեռնարկել համապատասխան միջոցներ ՄԿՈՒ շարժունությունը խթանելու համար, այդ թվում՝
    - Խրախուսել մեծ քանակով Ն-ՄԿՈՒ ուսանողների և ՄԿՈՒ մասնագետների, որպեսզի նրանք մասնակցեն անդրազգային շարժունությանը;
    - Խրախուսել տեղական և տարածաշրջանային իշխանություններին, ինչպես նաև ՄԿՈՒ մատակարարներին, որպեսզի նրանք մշակեն միջազգայնացման մշակույթ և միջազգայնացման ռազմավարություն՝ ներառելով միջսահմանային շարժունություն;
    - Ձեռնարկել իրավական և վարչական խոչընդոտներ կապված աշակերտների և սովորողների շարժունության հետ;
    - Քաջալերել մասնագիտական պալատներին, բիզնես կազմակերպություններին և այլ համապատասխան կազմակերպություններին և աջակցել ընդունող և ուղարկող ձեռնարկություններին աշակերտների և սովորողների համար անդրազգային շարժունությունում համապատասխան պայմաններ տրամադրելու մեջ;
    - Ապահովել լեզվի ուսուցումը և միջազգային կարողությունները ՄԿՈՒ ուսումնական ծրագրում;
    - Օպտիմալ օգտագործել այլ ԵՄ գործիքներ (օր. Որակավորումների եվրոպական շրջանակ, Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական կրեդիտային համակարգ, Եվրոպասս (Europass))՝ բարձրացնելով որակավորումների և կարողությունների փոխադարձ ճանաչումը:

Աջակցություն ԵՄ մակարդակով.

- Քաղաքականության ձեռնարկ Շ-ՄԿՈՒ հասանելիության և մասնակցության մասին;
- Ուղղորդում և տեխնիկական աջակցություն Որակավորումների եվրոպական շրջանակi իրականացման համար, հատկապես կիրառելով ուսումնառության արդյունքի մոտեցումը;
- Որակավորումների ազգային շրջանակի զարգացումների քարտեզագրում Եվրոպական կրթական հիմնադրամի (ԵԿՀ/ETF)-ի և Եվրոպայի մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման կենտրոնի (Cedefop) կողմից;

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

- Խորհրդի Հանձնարարական ոչ-ֆորմալ և ֆորմալ կրթության վավերացման համար (2011);
- Առաջընթացի զեկույց ցկյանս ուղղորդման քաղաքականության, համակարգերի և վարպետության վերաբերյալ- 2011 (Եվրոպայի մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման կենտրոն, Եվրոպական կրթական հիմնադրամ և Ցկյանս կրթության քաղաքականության ցանցային եվրոպական ուղեցույց/ELGPN);
- Ուղղորդում և տեխնիկական աջակցություն Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական կրեդիտային համակարգի իրականացման համար;
- Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական կրեդիտային համակարգի իրակացման պարբերաբար վերանայում (Cedefop-ի հետ միասին);
- Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական կրեդիտային համակարգի ծրագրերի թեմատիկ ցանցային հաղորդակցում Լեոնարդո դա Վինչի ծրագրի շրջանակում;
- Խորհուրդներ ուսումնառության շարժունության վերաբերյալ (2011);
- Հաշվի առնել ԵՄ ծրագրի ընդունումը ՄԿՈՒ շարժունության համար Հանձնաժողովի առաջարկի հիման վրա (2011);
- Առաջարկել որակյալ հիմք փորձարարության համար;
- Աշակերտների համար խթանել շարժունություն, այդ թվում՝ աջակցության պորտալի միջոցներ Լեոնարդո դա Վինչի ծրագրի շրջանակներում;
- Մշակել Եվրոպական հմտությունների անձնագիր որպես Europass-ի մի մաս մինչև 2012 թվականը:

Ստեղծագործականության, նորարարության և ձեռներեցության ընդլայնում

5. Նորարարության, ստեղծագործականության և ձեռներեցության խթանում, ինչպես նաև ՏՀՏ կիրառում (Ն-ՄԿՈՒ-ում և Շ-ՄԿՈՒ-ում)

ՄԿՈՒ-ում ստեղծագործականությունը և նորարարությունը, ինչպես նաև նորարարական մեթոդների կիրառումը կարող են խրախուսել սովորողներին մնալ ՄԿՈՒ-ում մինչ որակավորում ստանալը:

Ա. Մասնակից երկրները ակտիվորեն պետք է խրախուսեն ՄԿՈՒ մատակարարներին համագործակցել նորարարական ձեռնարկությունների, դիզայներական կենտրոնների, մշակութային ոլորտի և բարձրագույն կրթական հաստատությունների հետ՝ ստեղծելով «գիտելիքների համագործակցություն»: Սա պետք է օգնի նրանց ձեռք բերել արժեքավոր պատկերացում նոր զարգացումների և հմտությունների կարիքների վերաբերյալ և զարգացնել մասնագիտական գերազանցություն և նորարարություն: Այսպիսի համագործակցությունները կարող են նաև օգտակար լինել փորձի վրա հիմնված ուսուման մեթոդների ներկայացման համար, ինչպես նաև փորձի խրախուսման և ուսումնական ծրագրերի հարմարեցման համար;

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

Բ. Պետք է օգտագործել ՏՀՏ վերապատրաստումների մատչելիությունը առավելագույնի հասցնելու և ակտիվ ուսուցումը խթանելու համար, ինչպես նաև ՄԿՈՒ-ում աշխատանքի վրա հիմնված և դպրոցի վրա հիմնված նոր մեթոդներ զարգացնելու համար;

Գ. Մասնակից երկրները պետք է աջակցեն նախաձեռնություններին, որոնք նպատակ ունեն նպաստել ձեռնարկատիրություններին և՛ Ն-ՄԿՈՒ-ում, և՛ Շ-ՄԿՈՒ-ում՝ սերտ համագործակցելով գործատուների, ՄԿՈՒ մատակարարների և ազգային բիզնեսը օժանդակող ծառայությունների հետ: Այս ամենին հասնելու համար նրանք պետք է խրախուսեն համապատասխան ֆինանսավորման տրամադրումը, օրինակ՝ ուսումնական նյութերի, գործիքների համար և մինի-ընկերությունների հաստատումը սովորողների կողմից և պետք է ձգտեն ընդլայնել համագործակցությունը տարածաշրջանի մակարդակով;

Դ. Մասնակից երկրները պետք է աջակցեն նոր հաստատված և ապագա ձեռնարկատերերին՝ խրախուսելով ՄԿՈՒ շրջանավարտներին ու սկսնակներին և խթանելով կրթական շարժունությունը երիտասարդ ձեռնարկատերերի համար:

Կարճաժամկետ ծրագրված արդյունքներ 2011-2014 թթ. համար Ռազմավարական Նպատակ 5
Գործողություններ ազգային մակարդակով՝ 13. Խրախուսել համագործակցությունների ստեղծագործականությանը և նորարարությանը (ՄԿՈՒ մատակարարներ, բարձրագույն կրթական հաստատություններ և դիզայներական, մշակութային, հետազոտական և նորարարական կենտրոններ); 14. Խրախուսել արդյունավետ և նորարական, որակյալ տեխնոլոգիաների կիրառումը ՄԿՈՒ բոլոր մատակարարների կողմից (այդ թվում՝ պետական-մասնավոր հաղորդակցում և համագործակցություն)՝ ապահովելով անհրաժեշտ սարքավորումներով, ենթակառուցվածքներով և ցանցով՝ ունենալով շարունակական բարելավումներ, որոնք անդրադառնում են տեխնոլոգիական և մանկավարժական փոխընբռնման զարգացումների մեջ; 15. Միջոցներ ձեռնարկել ձեռներեցության խթանման համար, օրինակ՝ խթանելով առանցքային հմտությունների ձեռքբերումը՝ հնարավորություն տալ պրակտիկ փորձառությանը ձեռնարկություններում և ընդգրկել բիզնես ոլորտից փորձագետների: Աջակցություն ԵՄ մակարդակով. - Նախադրել ԵՄ մակարդակով ՄԿՈՒ/ Բիզնես Ֆորում՝ շեշտը դնելով հետևյալ թեմաների վրա՝ 1. ՄԿՈՒ դերը գիտելիքների եռանկյունու մեջ 2. ՄԿՈՒ-ից բիզնես անցումը; ինչպես աջակցել ՄԿՈՒ շրջանավարտներին նոր ձեռնարկություններ սկսելու մեջ:

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

Հավասարության, սոցիալական համախմբվախծության և ակտիվ քաղաքացիության նպաստում

6. Ն-ՄԿՈՒ և Շ-ՄԿՈՒ իրականցում

Մասնակից երկրները պետք է առաջարկեն ՄԿՈՒ-ը, որը կբարձրացնի մարդկանց աշխատունակությունը (և՛ կարճաժամկետ, և՛ երկարաժամկետ), որն էլ կօգնի նրանց զարգացնել կարերայի որակը, բավարար աշխատանքային փորձը, ինքնավստահությունը, մասնագիտական հպարտությունը և ազնվությունը և որն էլ նոր հնարավորություններ կստեղծի աճելու թե՛ իրենց մասնագիտական, թե՛ անձնական կյանքում: Այս նպատակին հասնելու համար մասնակից երկրները պետք է.

Ա. Երաշխավորել, որ սկզբնական ՄԿՈՒ-ն կապահովի սովորողներին ինչպես ճշգրիտ մասնագիտական հմտություններով, այնպես էլ լայն առանցքային կարողություններով, ներառելով՝ լայնակաի իրավասություններ, որը նրանց թույլ կտա հետևել հետագա կրթությանն ու ուսուցմանը (ՄԿՈՒ ներսում կամ բարձրագույն կրթությունում) և աջակցել կարիերայի ընտրությանը, աշխատաշուկայում նրանց մասնակցությանը և փոփոխություններին: Գիտելիքը, հմտությունները և կարողությունները, որոնք մարդիկ ձեռք են բերում ՄԿՈՒ միջոցով, պետք է հնարավորություն տան կառավարել իրենց մասնագիտական ուղին և խաղալ ակտիվ դեր հասարակության մեջ;

Բ. Համոզվել, որ մեծահասակների ուսուցման համակարգը նպաստում է առանցքային հմտությունների ձեռքբերմանը և հետագա զարգացմանը: Սա կարող է իրականացվել ՄԿՈՒ մատակարարների, տեղական համայնքների և քաղաքացիական հասարակական կազմակերպության հետ համագործակցելով:

Գ. Մեծացնել ՄԿՈՒ ներդրումները՝ կրճատելով դպրոցը վաղ լքողների տոկոսային քանակը մինչև 10 % կանխարգելիչ և մեղմացնող միջոցներ համադրելու շնորհիվ: Այս ամենին կարելի է հասնել, օրինակ՝ ՄԿՈՒ համապատասխան աշխատաշուկայի միջոցով, աշխատանքի վրա հիմված ուսուցմամբ և դասընթացերով, ուսումնառության ճկուն ուղիներով, արդյունավետ առաջնորդությամբ և խորհրդատվությամբ և ուսումնական բովանդակության և մեթոդների ուսուցմամբ, որոնք բացահայտում են երիտասարդների ապրելակերպը և հետաքրքրությունները՝ պահպանելով ՄԿՈՒ համար բարձրորակ ստանդարտներ:

Դ. Ձեռնարկել համապատասխան միջոցներ մուտքի հավասար իրավունք ապահովելու համար հատկապես բացառման վտագի տակ ընկած անհատների և խմբերի համար, մասնավորապես՝ ցածր հմտության և անհմուտ մարդկանց, կարիքավոր կամ անապահով մարդկանց, և մեծահասակ աշխատաողների: ՄԿՈՒ-ում այսպիսի խմբերի մասնակցությունը պետք է նպաստել և խրախուսել ֆինանսական կամ այլ միջոցների և նաև ոչ-ֆորմալ և ֆորմալ կրթության վավերացման միջոցով, ինչպես նաև ճկուն ուղիների տրամադրմամբ;

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

Ե. Նպաստել ակտիվ քաղաքացիություն ՄԿՈՒ-ում, օրինակ՝ խրախուսելով համագործակցությունը ՄԿՈՒ մատակարարների և քաղաքացիական հասարակական կազմակերպությունների միջև կամ ազգային օրենսդրությանը համապատասխան խթանել սովորողների ներկայությունը ՄԿՈՒ հաստատություններում: Այսպիսի խթանումը կարող է նպաստել հմտությունների և կարողությունների վավերացմանը, որոնք ձեռք են բերվել կամավորական աշխատանքների միջոցով:

Կարճաժամկետ ծրագրված արդյունքներ 2011-2014 թթ. համար Ռազմավարական Նպատակ 6
Գործողություններ ազգային մակարդակով՝ 16. Ձեռնարկել կանխարգելիչ և մեղմացնող միջոցներ ՄԿՈՒ ներդրումը առավելագույնի հասցնելու համար՝ պայքարելով կրթությունից վաղ հեռանալու դիմաց; 17. Դիտարկել հատուկ միջոցառումներ, որոնք ուղղված են ցածր հմտություն և «ռիսկային» խմբերի մարդկանց մասնակցության բարձրացմանը կրթության և ուսուցման մեջ, այդ թվում՝ զարգացնելով ճկուն ուղիներ Ն-ՄԿՈՒ-ում և օգտագործելով համապատասխան ուղղորդող և աջակցող ծառայություններ; 18. Վերապատրաստումների մուտքի բարձրացման համար կիրառել ՏՀՏ և խթանել ակտիվ ուսուցումը, ինչպես նաև զարգացնել նոր մեթոդներ և աշխատանքի վրա և դպրոցի վրա հիմնված ՄԿՈՒ-ում, որպեսզի հեշտացնել «ռիսկային» խմբերի մասնակցությունը; 19. Օգտագործել գոյություն ունեցող վերահսկման համակարգեր ՄԿՈՒ-ում «ռիսկային» խմբերի մասնակցությունն աջակցելու համար.տես Կարճաժամկետ սպասելիքներ 6: Աջակցություն ԵՄ մակարդակով. - Լավագույն փորձի հիման վրա ստեղծված ուղեցույց, որն աշխատանքի վրա հիմնված ուսուցման և առանցքային կարողությունների համադրության միջոցով իր մեջ կընդգրկի «ռիսկային» խմբեր; - Խորհրդի Հանձնարարական կապված դպրոցը վաղ լքելու նվազեցման հետ (2011):

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

Շեղակի նպատակներ

7. **ՄԿՈՒ շահագրգիռ կողմերի առավել մեծ ներգրավվածություն և ավելի մեծ տեսանելիություն Եվրոպական համագործակցության ձեռբերումների համար ՄԿՈՒ-ում**
   ՄԿՈՒ շահագրգիռ կողմերի առավել մեծ ներգրավվածությունը ենթադրում է ավելի մեծ տեսանելիություն Եվրոպական համագործակցության ձեռքբերումների համար ՄԿՈՒ-ում: Եվրոպական հանձնաժողովը և մասնակից երկրները հետևաբար պետք է քննարկեն հստակ և նպատակային հաղորդակցության ներդրումները շահագրգիռ կողմերի տարբեր խմբերում ներպետական և եվրոպական մակարդակով: ԵՄ գործիքների օգտագործումը հեշտացնելու համար սովորողները և բոլոր ներգրավված կողմերը պետք է ստանան մեծ և հարմարեցված տեղեկատվություն:

8. **Եվրոպական և ազգային գործիքների համակարգված կառավարում թափանցիկության, ճանաչման, որակի ապահովման և շարժունության ոլորտներում**
   Վերոնշյալ ռազմավարական նպատակների հետ միասին եվրոպական և ազգային տարբեր գործիքների ներդաշնակ և փոխլրացնող օգտագործումը թափանցիկության, ճանաչման, որակի ապահովման և շարժունության ոլորտներում առաջիկա տարիների ընթացքում մասնակից երկրների համար պետք է լինի բարձր առաջնահերթության: Կոպենհագենյան գործընթացի համաձայն պահանջվում են այդ գործիքների համաձայնեցված կառավարումը և Բոլոնյան գործընթացի գործիքների ու սկզբունքների հետ ավելի ուժեղ համակցված գործողությունը:

9. **ՄԿՈՒ քաղաքականության և այլ համապատասխան քաղաքականության ոլորտների համագործակցության ակտիվացում**
   Մասնակից երկրները և Եվրոհանձնաժողովը պետք է ակտիվացնեն համագործակցությունը ՄԿՈՒ քաղաքականության և այլ քաղաքականության ոլորտների միջև, ինչպիսիք են՝ աշխատանքը, տնտեսական հարցերը, հետազոտությունը և նորարարությունը, սոցիալական հարցերը, երիտասարդությունը, սպորտը և մշակույթը, որպեսզի հավատարիմ մնան Միասնական Ուղեցույցներ Եվրոպա2020-ին և բարձրացնեն հմտությունների և կարողությունների ճանաչումը:

10. **ՄԿՈՒ-ում տվյալների որակի և համադրելիության բարելավում ԵՄ քաղաքականության ստեղծման համար**

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

ԵՄ մակարդակով քաղաքականության ստեղծումը ՄԿՈՒ-ում պետք է հիմնված լինի առկա համեմատելի տվյալների վրա: Այդ նպատակով և նաև օգտագործելով Ցկյանս ուսումնառության ծրագիրը՝ անդամ պետությունները պետք է հավաքեն ՄԿՈՒ համապատասխան և հուսալի տվյալներ, այդ թվում՝ ՄԿՈՒ շարժունությունը և այդ ամենը դարձնեն մատչելի Եվրոստատի համար: Անդամ պետությունները և Հանձնաժողովը պետք է համատեղ համաձայնության գան, թե որ տվյալները պետք է մատչելի լինեն առաջին հերթին:

11. **ԵՄ օժանդակության արդյունավետ օգտագործումը**

Եվրոպական կառուցվածքային հիմնադրամը և Ցկյանս Ուսուցմնառության ծրագիրը պետք է օգտագործվեն ՄԿՈՒ համար համաձայնեցված առաջնահերթություններին աջակցելու համար, ներառելով՝ միջազգային շարժունությունը և բարեփոխումները, որոնք իրականացվել են մասնակից երկրների կողմից:

Կարճաժամկետ ծրագրված արդյունքներ 2011-2014 թթ. համար Ռազմավարական Նպատակներ 7-11
Գործողություններ ազգային մակարդակով՝ 20. Ստեղծել հաղորդակցության ռազմավարություն տարբեր շահագրգիռ կողմերի խմբերի համար, կենտրոնացված գործիքների իրականացման և ավելացված արժեքի վրա (ՄԿՈՒԵԿՀ, ԿԿՓԵՀ, վերաբերելով ՈԱՇ-ից մինչև ՈԵՇ, որակի ապահովման համակարգեր Որակի Ապահովման Եվրոպական Հենքային Շրջանակին (ՈԱԵՀՇ /EQAVET) համահունչ); 21. Նախադրել կառուցվածքային համագործակցության մեխանիզմներ ՄԿՈՒ հատվածի և աշխատանքային ծառայությունների միջև բոլոր մակարդակներում (քաղաքականություն և իրականացում), ներառելով՝ սոցիալական գործընկերներին; 22. Նպաստել ՄԿՈՒ մակարդակի տվյալների բարելավմանը Ն-ՄԿՈՒ ուսանողների համար, ներառելով՝ շարժունություն և աշխատունակություն: Աջակցություն ԵՄ մակարդակով. - Աջակցել վերոնշյալ նպատակների ձեռքբերմանը Ցկյանս Ուսումնառության ծրագրի միջոցով և հարկ եղած դեպքում Եվրոպական Կառուցվածքային հիմնադրամի միջոցով; - Աջակցել հասակակցիների ուսուցմանը մասնակից երկրների և նորարական ծրագրերի միջև; - Ստեղծել ուժեղացված համակարգման ընթացակարգ ընդհանուր եվրոպական գործիքների իրականացման համար կրթության և ուսուցման

ոլորտում;
- Եվրոպական հաղորդակցության ռազմավարություն եվրոպական թափանցիկության գործիքների վրա;
- ՄԿՈՒ մատակարարների միություններ հետ մշակել կառուցվածքային համագործակցություն ԵՄ մակարդակով;
- Ամրապնդել կառուցվածքային համագործակցություն կրթության և ուսուցման ու աշխատանքային քաղաքականության ոլորտների միջև;
- Բարելավել ԵՄ մակարդակի տվյալները Ն-ՄԿՈՒ ուսանողների վրա, ներառելով՝ շարժունություն և աշխատունակություն;
- Սոցիալական գործընկերները բոլոր մակարդակներում պետք է շարունակեն ակտիվ դեր խաղալ Կոպենհագենի գործընթացում (կառավարում և սեփականություն) և նպաստեն վերոնշյալ կարճաժամկետ սպասվելիքների իրականացմանը;
- ՄԿՈՒ զարգացումների վերաբերյալ հաշվետվություն Անդամ պետություններում և մասնակից երկրներում;
- Ամրապնդել փոխանակումների ընդլայնումը հարևան երկրների հետ:

IV. Սկզբունքներ ընկած Կոպենհագենի գործընթացի կառավարման և սեփականություն հիմքում

- Մասնակից երկրները պետք է ուժեղ պարտավորություն ստանձնեն Կոպենհագենյան գործընթացի առաջնահերթությունների իրականացման համար Եվրոպա2020 ազգային բարեփոխումների ծրագրի շրջանակներում;
- Կոպենհագենյան գործընթացի ներքո Հաշվետվությունը պետք է ներառված լինի «ԿՈՒ2020» ռազմավարական շրջանակներում: Սա կապահովի ամենաարդյունավետ ճանապարհը Եվրոպա2020 ռազմավարության հաշվետվությանը նպաստելու համար և կբարձրացնի ՄԿՈՒ տեսանելիությունը ցկյանս ուսումնառության մեջ:
- Պետք է ամրապնդվի համագործակցությունը ՄԿՈՒ ոլորտում: Համակարգման բաց եղանակը պետք է շարունակի ծառայել համագործակցության համար որպես գլխավոր մեխանիզմ: Տարեկիցների ուսուցումը և նորարարական ծրագրերը պետք է ապահովեն ազգային քաղաքականության զարգացումների աջակցման միջոցներ;
- Մասնագիտական Ուսուցման գլխավոր տնօրենը (ՄՈՒԳՏ), Եվրոպայի սոցիալական գործընկերները և Մասնագիտական Ուսուցման խորհրդատվական կոմիտեն (ՄՈՒԽԿ) պետք է շարունակեն ակտիվ դեր խաղալ Կոպենհագենյան գործընթացի կառավարման մեջ;

Բրյուգեի պաշտոնական հաղորդագրություն- դեկտեմբերի 7, 2010 թվական

- Cedefop-ը և Եվրոպական կրթական հիմնադրամը (ԵԿՀ/ ETF)՝ համաձայն իրենց հատուկ մանդատի պետք է շարունակեն աջակցել քաղաքականության զարգացմանը և իրականացմանը, ինչպես նաև զեկուցել ռազմավարական նպատակների և կարճաժամկետ սպասելիքների առաջընթացի վերաբերյալ և տրամադրել փաստեր ՄԿՈՒ-ում քաղաքականության կայացման համար;
- Պետք է խրախուսել ՄԿՈՒ մատուցող կազմակերպություններին համագործակցել Եվրոպական մակարդակով՝ նպատակ ունենալով նպաստել վերոնշյալ նպատակներին;
- Քաղաքականության երկխոսությունները և փորձի փոխանակումը մեր գլոբալ գործընկերների հետ կարող են նպաստել ներկա և ապագա մարտահրավերների հանդիպմանը: Ապահովել փոխառությունը և համագործակցությունը երրորդ երկրների և միջազգային այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Եվրոպայի տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ԵՏՀԶԿ/OECD), Եվրոպայի Խորհուրդը, Աշխատանքի Միջազգային Կազմակերպությունը և մասնավորապես ՅՈՒՆԵՍԿՕ-ն: Այս աշխատանքին մասնակցելու անդամ բոլոր պետությունների իրավունքը պետք է երաշխավորված լինի:
- Կարճաժամկետ ծրագրված արդյունքների նոր ցանկը պետք է կազմվի մինչև 2014 թվականը, որը հիմնված կլինի վերոնշյալ ռազմավարական նպատակների վրա:

Այս նյութը հաստատվել է ԵՄ անդամ պետությունների (Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Կիպրոս, Չեխիայի Հանրապետություն, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդեռլանդներ, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովենիա, Սլովակիա, Իսպանիա, Շվեդիա, Միացյալ Թագավորություն), ԵԱԱՀ/ԵՏՏ (Լիխտենշտեյն, Նորվեգիա) և թեկնածու երկրների (Խորվաթիա, Նախկին Հարավսլավական Մակեդոնիայի Հանրապետություն, Իսլանդիա, Թուրքիա) մասնագիտական կրթության և ուսուցման համար պատասխանատու նախարարների կողմից: Նյութում երկրները կոչվում են «մասնակից երկրներ»: Նյութը հաստատվել է նաև Եվրոպական Հանձնաժողովի և Եվրոպական Սոցիալական Գործընկերների կողմից՝ Առևտրի միության եվրոպական կոնֆեդերացիա (ETUC), Բիզնես Եվրոպա, Արհեստների, փոքր և միջին ձեռնարկատիրությունների եվրոպական ասոցիացիա (UEAPME), Գնահատման և կրթական քաղաքականության կենտրոն (ԳԿՔԿ/CEEP):